ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 243-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 4-րդ և 5-րդ մասերի հոդվածների համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել բյուջեի մնացորդների մասին Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:

Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 178317.522 հազար դրամ, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը 63089.0485 հազար դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ֆոնդային բյուջեի պարտքերի մարման նպատակով կուղղվի համայնքի ֆոնդային բյուջե:

Բյուջեի վարչական մասի եկամուտները և ծախսերը ավելացվել են 195479.0 հազար դրամով, ընհանուր վարչական բյուջեն կազմում է 2570218.5 հազար դրամ: 195479.0 հազար դրամից 20000.0 հազար դրամը կուղղվի <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրին, 45479.0 հազար դրամը կուղղվի <<Պետական կառավարում>> ծրագրին և 130000.0 հազար դրամը կուղղվի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդ:

Քանի որ բյուջեն կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ